

Պ. 'Ի Եւրօբայ ազգ շատ կան, ես միայն թէ վասն փափապաշտից ասի եւ ոչ վասն լօթերանաց եւ կարժինացն⁴⁶ ասի: Ես բարուք գիտեմ, որ նոցա մեշն ուղղութիւն կայ, թէպէտ նոքա յեւ յերկարեն փոքր ինչ եւ ոչ որպէս զձեզ, բայց հատանեն վճիռն ուղիղ:

Հ. Շնորհէ պատմել գերրորդ բանն Ռուսաց, որպէս որ խոստացար:

Պ. Յամի Տեառն 1724, յորժամ որ կապեցին զիս ի քաղաքն Ղասիմով⁴⁷ եւ ածին ի բանտ ընդ մահապարտան, իբրեւ երեկոյացաւ, լուցին ճրագ, նայեա ճրագ մի եւս տարան ներքսագոյն բանտն: Անկարծ տեսի անդ կին մի, զարմանք կալաւ զիս, թէ ինչ պատճառէ կայ կինս այս աստ: Բայց ոչ աւատայի աշացս, բազում անգամ աստ եւ /219b/ անդ հայեցի թէ միգուցէ երեսոյթք իցէ, դարձեալ պշնուի անդ, տեսանէջի, որ էր ստոյգ կին. մանանէր մատմանաւ վուշ եւ տղա մի ի գրկին, որ յիշեցուցանէր եւ այր ոմն առ ընկեր: Դեռեաւ ոչ [հ]աւատացի աշացս, մինչ որ հարցի բանտարգելոցն եւ ստուգի յիմացայ, թէ էր կին, առ որ հարցի զպատճառն, պատմեցին, թէ այր եւ կին են սոքայ: Յաւուր միում վիճին ընդ յիրար, աստ ոչ կրեմ զստոյգն գրել, քանզի մոռացայ, ոչ գիտեմ թէ այրն գայ գանկատիլ ի կնոջն, թէ ի առնեն, ինչ եւ իցէ, ասացին, թէ ահայ երկու տարի յէ, որ աստ կան ի բանտիս: Առաջին տարին ոտաներն էր շղթա[յ], ահայ մէկ տարի յէ, որ շղթայքն բացան: Բացի այս գրկի մանկանն գոյ այլ եր[ե]ք եւ չորք, որք են ի տան իւրեանց անտէր: Եւ մէկ օր այրն գնայ մուրանալ եւ տանի ի լուսամտէն հացն տայ մանկացն եւ աւելորդն բերէ աստ եւ ուտէ ընդ կնոջն, միւս օրն նոյն օրինակաւ առնէ կինն՝ գնալով ի մուրանալ, ահայ զայս զարհուրեալ զայրացաւ հոգի իմ ի փորի յիմում, ասի՝ այլ ուրիշ պատճառ չկա՞յ, ասին՝ ոչ: Ասի՝ ապայ ընդէ՞ր ոչ հաշտին, պատասխանեցին՝ վաղուց հաշտիլ են: Ասի՝ ապայ ընդէ՞ր ոչ արձակեն զգոսայ ի բաց: Ասա-

46 Կալուիմակաւ:
47 Քաղաք Ռեազանի մարզում:

ցին՝ պարտ է, որ գրեն մին հաշտացու զեկարան, որ նորա վերայ ձեռնագրէ դատաւորն, որ ապայ թէ թողուն զնոսա, գնալ ի բաց, ասի՝ ապայ ընդէ՞ր ոչ /220a/ գրեն զեկարան: Ասին՝ ըստակ շունին, որ զայս առնեն, հարցի՝ որչանք ստակ պիտի, համարեցին, թէ 120 դիան, որ լինի պարսից 24 փող, օսմանցուցն 10 փարայ: Իբրեւ լուայ զայս, պակաւ լեզու իմ, հարկեցայ լուել, ո՞հ տարի մի՞թէ ոչ գոյր անդ ի քաղաքին աստուածասէր ոք, որ այն փոքրիկ ծախն առնէր՝ ազդելով այր եւ կինն, հանդերձ չորս եւ հինկ մանկամբքն եւ կամ զինչ էր, եթէ այն դպիրն ոչ առնոյր վարձ զզեկարան գրելոց եւ այլ: Ապայ թէ շնորհեցի 200 դիան, որք գերծան, եթէ Աստուած ոչ էր այցել նոցա, որ ես ոչ էջի պատահել անդ, կարծեմ թէ մինչ ի ցայսօր կային անդ՝ ի բանտի ողորմելիքն այն: Ահայ վասն այսպիսի այլ իրաց եւս ասեմ, թէ չիք դատաստան ի Եւրօբայ, ուրեմն ամաչի եւ լուռ լէ՛ր:

Հ. Այտ քու ասածն մեծ անողորմելիութիւն է, ի մեր Եւրօբայ այսպիսի գործ քաւ լիցի, ոուսք Եւրօբացի չեն:

Պ. Ռուսք Եւրօբացի չեն, ապայ ի՞նչ են: Մի ամաչել եւ մի ուրանալ զնոսա, թէ Եւրօբացի չեն, խրատ տամ քեզ՝ ասայ Եւրօբացի չեն, բայց են այլ ազգ եւ ոչ ի մերմէ: Իրաւ որ, այլ ազգ են, բայց կէօփոլ կայսրն⁴⁸ յորժամ որ յրնկալաւ զՊետրոս թագաւորն Ռուսաց եւ շնորհեց նմայ իւր երկզխեայ արծիւն⁴⁹, այն ժամ մինչի Յարեցին համարեցան յերկիր Եւրօբայ եւ կալ մինչ ի ցայսօր եւ այլ մանաւանդ, որ յրնկալան ի ձէնն ամենայն կարգ եւ սահման, յաւել որ յուսան դատաստանն /220b/ ի ձենն, որ համանման է դատաստանն նոցա ձեր դատաստանին եւ ոչ յաւել մագ մի⁵⁰: Միայն թէ դուք տաք զլեղին

48 Լեոպոլդ Ա. (1640-1705) - Սրբազան Հռոմէակաւ կայսրութեան միապետ:
49 Իրակաւնում Ռուսակաւ կայսրութիւնում երկզխաւանի արծուի պատկերն աւելի ճիւղ կիրառութիւն ունի:
50 Տիլիա Մուշեղեանն ակնարկում է Պետրոսի իրաւակաւ բարեփոխումների ճիւղում համաւերոպակաւ արժեքների որդեգրումը: